



ՊԶՏԻԿ-ՄԶՏԻԿ

ՄԵՐ ՅԱԶՈՐԴ
ԹԻՐԸ՝
ՈՒՐԲԱԹ,
28 ՆՈՅԵՄԲԵՐ
2014

«ԱԶԴԱԿ»Ի ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ



ՍՕՍԻ
ՅԻՇԱՏԱԿԻ
ՖՈՆՏ

ԺԴ. ՏԱՐԻ

ԹԻՒ 4 (143)

ՀՈԿՏԵՄԲԵՐ 2014

bzdig.mezdig@gmail.com

ԸԼԼԱԼ ՊԱՀԱՆՋԱՏԵՐ

2014-2015 Դպրոցական տարեշրջանի վերամուտը ամիսէ մը աւելի սկսած է, եւ ամէն մարդ՝ ուսուցիչ, աշակերտ, ծնողներ լծուած է գործի:

Աշխարհի բոլոր դպրոցականներուն համար նոր տարեշրջանը կ'ենթադրէ նոր դասեր, նոր պատասխանատուութիւններ, նոր հորիզոններ. ասոնք պետք է ըլլան բնական պայմաններու մէջ ծնող եւ հասակ առնող փոքրիկներու առօրեան, մտահոգութիւնները եւ պարտականութիւնները: Սակայն դժբախտաբար միշտ այս չէ իրողութիւնը, որովհետեւ միշտ չէ, որ ժողովուրդներու եւ ազգերու պատմութիւնները կ'ունենան հեզասահ ընթացք, միշտ չէ, որ խաղաղ պայմաններու մէջ դպրոցականներ դպրոց կ'երթան եւ միայն մտահոգ կ'ըլլան իրենց սորված կամ չսորված դասով:

Ահա նման կացութեան մէջ կը գտնուէին հարիւր հազարով փոքրիկներ Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ մէջ, երբ անոնց մտահոգութիւնը առօրեայ պարզ հոգերէն փոխուեցաւ եւ դարձաւ մահու կենաց մտահոգութիւն 1915 թուականին:

2015 թուականը Յեղասպանութեան ոգեկոչման 100-ամեակն է: Այս առիթով շատ ընելիք ունիք նաեւ դուք, սիրելի՛ աշակերտներ, ձեզի տարեկից այլ ժողովուրդներու աշակերտներուն մօտ, անոնց յիշեցնելու պատահածը, անոնցմէ պահանջելու, որ իրենց ձայնը ձեզի միացնեն, ձեզի հետ պահանջեն արդարութիւն եւ ամենէն կարելորդ՝ ձեզի հետ պայքարին, որպէսզի նման արարքներ երբեք չկրկնուին:



Ռիթա Սալլում - Գ. դասարան



Մայքըլ Հալաճեան

ԱՆՍԻԱԼ ԳՐԵՆՔ



Վերջապէս հասած է ժամանակը «Պզտիկ-Մզտիկ»-ի կազմակերպած «անսխալ գրենք» մրցումին:

Մրցումին կրնան մասնակցիլ 4-րդ, 5-րդ եւ 6-րդ դասարաններու աշակերտները:

Արձանագրութիւնները կը շարունակուին մինչեւ 2 Դեկտեմբեր՝ հեռաձայնելով 03/830036 թիւին՝ ժամը 3:30-7:00 կամ 01/260115 թիւին, ամէն Երեքշաբթի եւ Հինգշաբթի օրերը՝ ժամը 3:00-էն 6:00:

Մրցումը տեղի պիտի ունենայ Կիրակի, 7 Դեկտեմբերին «Ազդակ»-ի Փիւնիկ սրահին մէջ հետեւեալ ժամանակացոյցով. ժամը 3:00-էն 4:00՝ 4-րդ դասարան, 4:00-էն 5:00՝ 5-րդ դասարան, 5:00-էն 6:00՝ 6-րդ դասարան:

Իրաքանչիւր մակարդակի շահող աշակերտը պիտի ստանայ արժեքաւոր նուէր մը, իսկ բոլոր մասնակիցները պիտի ստանան յիշատակի նուէրներ:

Կը խնդրուի նկատի ունենալ յիշուած ժամկետը:



ԳՐԱՆՈՒԹՅՈՒՆ


THE MISSION «ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ»

Թամար Աբովյան-Խանճիանյանի «The Mission» խորագրեալ մանկապատանեկան գիրքերու շարքին 4-րդը նուիրուած է Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին:

Գիրքին հերոսը՝ Նարեկը մտահոգ էր, որ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակը կը մօտենար: Արդե՞ք ամէն բան վե՞րջ կը գտնէր այս ձեւով:

Նոյը՝ հայ պարիկներու ղեկավարը, իր աշխարհը ձգելով՝ եկած էր գտնելու այն պատանին, որուն սիրտին խորքերը ինչե՛ր պահուած էին: Միեւնոյն ժամանակ Նոյը մտահոգ էր պարիկներու աշխարհէն փախած չարաճճի պարիկներու վիճակով, որովհետեւ անոնք ինչե՛ր չէին կրնար ընել: Նոյը պետք է անպայման գտնէր չարաճճիները եւ զանոնք վերադարձնէր պարիկներու աշխարհը: Սակայն ան միտք մը կը յղանայ, որուն նախընթացը չէր եղած: Նոյը կ'ուզէ չարաճճի պարիկները օգտագործել՝ ճակատագրական գործ մը յաջողցնելու համար: Ծրագիրի իրագործումը եւ յաջողութիւնը գոհացում, հանգստութիւն եւ խաղաղութիւն կը պարգեւէ հայ ժողովուրդին, եւ այդ կ'ըլլայ առաջին քայլը՝ իրագործելու համար յաջորդները:

Արդեօք ի՞նչ միտք կը յղանայ Նոյը: Ինչպիսի՞ ծրագիր մըն էր այդ, որ անդորրութիւն կու տայ հայ ժողովուրդին: «The Mission» պատմութեան մանրամասնութիւնները իմանալու համար կ'արժէ կարդալ երեւակայական այս գիրքը, որ շատ բան կը փոխանցէ ընթերցողին ...



ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԺԱՊԱՒԷՆՆԵՐ

«The Cut» «ՀԱՏՈՒՄԸ ԿԱՄ ՍՊԻ»

Այս ժապաւենին բեմադրիչը, որ ծագումով թուրք մըն է՝ Ֆաթիհ Աքին անուով, կը ներկայացնէ ցեղասպանութեան ընթացքին պատահած դէպքերէն մէկը:

Ժապաւենին հերոսը դարբին Նազարէթ Մանուկեանն է, որուն դերը ստանձնած է ալժերիացի դերասան Թահար Ռահիմը: Մարտին քաղաքին մէջ թուրք զինուորները կ'էս գիշերին կը ներխուժեն անոր տունը, ուր կ'ապրէր իր կնոջը եւ երկուորեակ աղջիկներուն հետ, ու զայն կը տանին անապատ տաժանակիր աշխատանքի: Անապատի մէջ պետք է անոր կոկորդը կտրէին, սակայն թուրք սպան կը խնայէ անոր կեանքին, ու կը բաւարարուին քերծելով անոր կոկորդը:

Նազարէթը կը սկսի փնտռել իր կիսն ու աղջիկները եւ կը հասնի Ամերիկա: Հիւսիսային Տակոդայի մէջ ան կը զբաղի երկաթուղագիծի շինարարութեամբ ու հոն եւս կ'ենթարկուի ծեծի, երբ կը փորձէ կանխել տեղացի կնոջ մը վրայ ի գործ դրուելիք բռնարարքը: Այս ժապաւենը ներկայացուած է Վենետիկի ֆիլմերու փառատօնին: Ժապաւենի դերակատարներէն մէկը՝ Սիմոն Աբգարեան, ասուլիսի մը ընթացքին յայտնած է, թէ Աքինի այս ֆիլմը այն ֆիլմն է, որուն կը սպասէին հայերը, նկատի առած, որ ասիկա թուրքի մը կողմէ Հայոց ցեղասպանութեան թեմայով նկարահանուած առաջին ժապաւենն է: Անգլիալեզու այս ֆիլմին մէջ դեր ստանձնած են նաեւ Արսինէ Խանճեան, Ակին Գազին եւ ուրիշներ:



«ՄԵՏԱՂԱԴՐԱՄՆ ԱՆԱՊԱՏՈՒՄ»



Այս ժապաւենին հիմքը 1915-ի հայոց պատմութեան հետ կապուած իրադարձութիւններն են, հայ ժողովուրդի գաղթն ու ցեղասպանութիւնը: Նկարահանումներ սկսած են Երեւանի, Գաւառի, Սեւանայ լիճի շրջակայքին, Կարմիր Գիւղի, Դալարիկի եւ Տաթեւի գիւղին մէջ: Նկարահանումները պիտի շարունակուին Ամերիկա: Գլխաւոր դերերը ստանձնած են Մարտուն Դեւոնդեանն ու Բիւրեղիկ Մնէեանը:

Այս ժապաւենին նիւթի հեղինակներն են ամերիկացի Ռոպերթ Պեքման Պրիինը եւ Արփի Աղոյեանը: Ժապաւենը առաջին անգամ պիտի ցուցադրուի Հայաստանի մէջ Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին:



Ռոպերթ Պեքման



ՈՒՏԵԼԻՔԻ ՕՐ

ՁԴՆԱՅԻՆ



Հոկտեմբեր ամիսը ունի իւրայատուկ տօն մը՝ նուիրուած ուտելիքներու: Ի՞նչ պիտի ընենք ուտելիքներու օրը: Գիտէ՞ք, թէ աշխարհի մէջ կան շատ աղքատ պզտիկներ, որոնք ուտելիք չունին եւ անօթի կը մահանան: Այո՛, շատ են: Մանաւանդ այս օրերուն, երբ զանազան տեղեր պատերազմներ կ'ըլլան, եւ որուն պատճառով ալ աղքատութիւն կը տիրէ, մենք կը լսենք շա՛տ փոքրիկներու մասին, որոնք մեր ունեցած հացը ունենալու համար արցունք կը թափեն: Զանի՛- քանի՛ մանուկներ կը հիւանդանան, որովհետեւ անօթի են: Ուրեմն ինչո՞ւ մենք շնորհակալ չըլլանք մեզի համար պատրաստուած բոլոր ճաշերուն եւ ուտելիքներուն համար:

Եկեք մտածենք այս մասին կարդալէ ետք այս պատմութիւնը:

Օր մը Աստուած ոչ աղքատ մարդու մը երազին կը յայտնուի եւ կ'ըսէ.

- Վաղը գիշեր ձեր տունը պիտի գամ:



Երբ մարդը կ'արթննայ, կը մտածէ լաւ պատրաստութիւն մը տեսնել: Սակայն ուներ ընդամենը 3 թուղթ դրամներ եւ կ'ուզէր իր ունեցածը ամբողջ տրամադրել իր մեծ «հիւրին»: Իր 3 թուղթ դրամներով ան կ'ունենայ միայն մէկ հատ ձուկ, մէկ հատ հաց եւ մէկ շիշ ալ կաթ:

Շուկայէն վերադարձին կը հանդիպի մօր մը, որ գետին նստած իր փոքրիկը կը քնացներ: Փոքրիկը չէր քնանար, իսկ մայրը կու լար: Մարդը կը հարցնէ.

- Ինչո՞ւ կու լաս, ինչո՞ւ փոքրիկդ չի քնանար:

- Փոքրիկս անօթի է եւ չի կրնար քնանալ անօթութենէն: Ուրկէ՞ իրեն ուտելիք ճարեմ:

Մարդը շուկայէն բերած իր տոպրակէն կը հանէ մէկ շիշ կաթը եւ կու տայ մայրիկին, որպէսզի իր փոքրիկը կերակրէ: Մայրիկը շատ կ'ուրախանայ եւ կերակրելով իր փոքրիկը՝ կը քնացնէ զայն:



Քիչ մը եւս ճամբայ կտրելէ ետք այս անգամ կը հանդիպի փոքրիկ տղու մը, որ մայրին նստած՝ տխուր կը մտածէր: Մարդը կը հարցնէ փոքրիկ տղուն.

- Ինչո՞ւ տխուր ես, ի՞նչ կը մտածես:

- Հայրիկիս գործ չունի, որ աշխատի, քովը դրամ ալ չէ մնացած: Չեմ գիտեր, թէ կէսօրին ի՞նչ պիտի ուտենք, մանաւանդ որ տունը փոքրիկ եղբայր մը ունիմ:

Մարդը փոքրիկին տխուր աչքերը դիտելով, կը հանէ ձուկը

եւ կու տայ փոքրիկին: Փոքրիկը կ'ուրախանայ եւ շնորհակալութիւն յայտնելով մարդուն՝ ձուկը կը տանի տուն:

Տակաւ ինչ տուն չհասած՝ այս անգամ կը հանդիպի աղջկան մը, որ գլուխը ծառին դրած եւ աչքերը գոց՝ կու լար: Մարդը, տեսնելով լացող աղջիկը, կը հարցնէ.

- Ինչո՞ւ կու լաս:



- Մայրիկս ինձմէ խնդրեց, որ երթամ հաց բերեմ: Բայց շուկայ գացած ժամանակս ինծի տուած դրամը կորսնցուցի: Չեմ գիտեր՝ ի՞նչպէս երթամ տուն, որովհետեւ մայրիկս շատ պիտի նեղուի:



Մարդը կ'ուզէ ուրախացնել փոքրիկ աղջիկը. կը հանէ իր տոպրակէն հացը եւ կու տայ անոր: Աղջիկը ցատկոտելով, ուրախութեամբ եւ շնորհակալութիւն յայտնելով՝ կը վերադառնայ տուն:

Մարդը ուրախացուց երեք հոգի, բայց...

Գիշեր եղաւ, եւ դուռը զարնուեցաւ: Մարդը բացաւ դուռը եւ տեսաւ Աստուած, որ հասած էր իր տունը: Աստուած գիտեր՝ ինչո՞ւ տխուր էր մարդը: Մարդը կ'ուզէ բացատրել եւ ներողութիւն խնդրել, որ չունի որեւէ բան հրամցնելու, բայց Աստուած անոր կ'ըսէ.

- Սիրելի՛ զաւակս, ինչո՞ւ կը նեղուիս, որ հրամցնելիք բան մը չունիս ինծի: Այն բոլոր աղքատներուն եւ անօթիներուն, որոնց դուն քու ուտելիքդ տուիր, ինծի տուած եղար: Ես հիմա աւելի ուրախ եմ, քան այն անձերը, զորս դուն ուրախացուցիր:

Ուրեմն ամենօրեայ ճաշի ժամանակ, մտածենք նաեւ այս պատմութեան մասին: Եթէ այս մարդուն պէս օգտակար դառնանք աղքատներուն, թէ՛ կ'ուրախանանք եւ թէ՛ կ'ուրախացնենք:





ՆՈՇՈՆԵՆ

ՕԴԱՊԱՐԻԿՆԵՐՈՒ ՓԱՌԱՏՈՆ

Նոր Մեքսիքոյի Նահանգի կեդրոն Ալպուքերքէի մէջ տեղի ունեցաւ օդապարիկներու փառատօնը:

Այս փառատօնը կը նկատուի աշխարհի ամենագեղեցիկներէն մէկը, որ սկսած է կազմակերպուիլ 1972 թուականէն ու կ'երկարի 9 օրերու վրայ՝ իւրաքանչիւր օրը ընդունելով աւելի քան 100 հազար այցելու: Այս փառատօնը իր գագաթնակէտին հասած է 2000 թուականին, երբ երկինք բարձրացած է 1019 օդապարիկ:

Այս տարուան փառատօնին 500 օդապարիկ երկինք բարձրացած է՝ հմայելով մեծ թէ փոքր ներկաները:



ՀԱՒԵՐՈՒ ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ ՄՐՅՈՒՄ



Չինաստանի Իչան քաղաքին մէջ տեղի ունեցած է հաւերու գեղեցկութեան մրցում: Վերջին հանգրուանին դատական կազմին ներկայացուած է 7 հաւ: Դատական կազմը իր գնահատականը ընելու ու ամենագեղեցիկ հաւը ընտրելու համար նկատի ունեցած է հաւերուն փետուրներուն խտութիւնը, մարմնին չափերը, քալուածքը եւ յատուկ «տաղանդ», եթէ ունին: Հաւերու այս մրցումին պարգեւը ստացած է Մէյ

անունով հաւ մը: Ան արժանացած է այս տիտղոսին իր պարին համար, որ կատարած է չինական ժողովրդական երաժշտութեան ընկերակցութեամբ: Ապա այս հաւը աճուրդով վաճառուած է աւելի քան 800 տոլարի, իսկ ստացուած գումարը յատկացուած է բարեսիրական գործի:

Ի՞նչ տարօրինակ երեւոյթ... Սակայն նպատակը արդարացուցած է այդ տարօրինակութիւնը:



ՈՍԿԻՈՎ ԴԵՐԿԵՐ



Լոնտոնի ճաշարաններէն մէկուն պատասխանատու խոհարարը պատրաստած է իւրայատուկ պըրկըր մը, որ եղած է աշխարհի ամենասուղը, որ կոչուած է «Կլեմպըրկըր», այսինքն՝ դիւթող, գրաւող: Այս պըրկըրի պատրաստութեան համար խոհարարը օգտագործած է խեցգետին, ձկնկիթ (քաւիար), կովու ու եղնիկի միս ու այլ ընտիր ուտելիքներ, ինչպէս՝ բադի ձու՝ պատուած ուտուելիք ոսկիով: Ամբողջացնելու համար այս իւրայատուկ պատրաստութիւնը, ան հացը համեմած է ճափոնական կանաչ թէյի յատուկ տեսակով եւ մայոնէզով, իսկ հացի երեսը պատած է ոսկիի թերթիկով: Իսկ համտեսելու համար այս ախորժաբեր ու թիւթի պըրկըրը, որ ունի 2618 շերմուծ, պետք է վճարել 1100 փաուստ:

Բարի ախորժակ...



ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՄԵԾ ՍՈՒԸ



Լոնտոնի բնակիչ Թոնի Զլովըր իր տան պարտեզին մէջ աճեցուցած է սոխ մը, որ կը կշռէ 8.5 քկ: Այսպիսով ան ապահոված է Կինեսի մրցանակ: Ան անցեալ հոկտեմբերին ցանած է այս սոխին հունտը ու ամբողջ տարի մը հոգ տարած է՝ անոր տրամադրած է աճելու յարմար միջավայր՝ ապահովելով խոնաւութիւն ու ջեռուցում: 8.5 քկ կշռող այս սոխով կարելի է պատրաստել սոխով ֆրանսական ապուր՝ 36 հոգիի համար, կամ 50 հատ սոխի օղակ (օնիոն ռինկ): Սակայն Թոնին չէ բաւարարուած այսքան մեծ սոխ աճեցնելով. ան այս սոխին հունտերը պիտի օգտագործէ յառաջիկայ տարի աւելի մեծ սոխ աճեցնելու համար:

Յաջողութիւն...



ՊԱՂՊԱՂԱԿ 1000 ՏՈԼԱՐԻ

Շիքակոյի հիւրանոցներէն մէկը իր ճաշացուցակին վրայ աւելցուցած է պաղպաղակ մը՝ «Վիքթորիա» անունով, ի պատիւ Անգլիոյ Վիքթորիա թագուհիին: Պնակ մը պաղպաղակը, որ կ'արժէ 1000 տոլար, կը պարունակէ 3 տեսակ վանիլիայի գունդեր եւ տուրմ, քարամել եղած գետնանուշ (քինաթ), քոնեակ, տաք ծորի տեսակ եւ քրեմ: Սակայն այս պաղպաղակին ամենէն արժեքաւոր մասը թագն է, որ պատրաստուած է սել տուրմով ու պատուած է ուտելիք ոսկի փոշիով: Այս պաղպաղակը կը հրամցուի բիրտեղայ գեղեցիկ պնակով մը, որ այցելուները կրնան իրենց հետ տանիլ:



ԱՊԱԿԵԱՅ ԿԱՄՈՒՐՋ

Չինաստանի Հունան նահանգին մէջ կառուցուած է 300 մետր երկայնք ունեցող կամուրջ մը, որուն յատակը քարի փոխարէն օգտագործուած է ապակի: Այս կամուրջը կը միացնէ երկու լեռնագագաթներ՝ 180 մետր բարձրութեան վրայ: Նկատի առած, որ այս կամուրջը կտրելը կրնայ վախ յառաջացնել անցորդին վրայ, մասնագիտացած անձնակազմ մը պատրաստ է օգնելու այն անցորդին, որ կը փափաքի առանձին չանցնիլ կամուրջէն:





ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԽՕՍԸ

ՁՈՒՆՈՒՄ



Հայոց ցեղասպանության 100-ամեակի կարգախօսն է «Կը յիշեմ եւ կը պահանջեմ», իսկ խորհրդանիշը՝ Անմոռուկ ծաղիկը: Անմոռուկ ծաղիկը բոլոր լեզուներով նոյն իմաստը ունի՝ յիշելու, չմոռնալու եւ յիշեցնելու:

Ծաղիկը ունի չորս հիմնական գոյներ.- մանուշակագոյն, բաց մանուշակագոյն, դեղին եւ սեւ:

Ընտրուած գոյները անցեալի, ներկայի եւ ապագայի խորհուրդը ունին: Սեւ գոյնը կը խորհրդանշէ սարսափներն ու յիշողութիւնը ցեղասպանութեան մասին՝ անցեալ:

Ներսի ճառագայթածէ բաց մանուշակագոյնը բոլորին հոգեհարազատ գաղափարին համամասնակից ըլլալն է՝ ներկայ:

Իբրեւ գերակշռող գոյն՝ մանուշակագոյնը լայնօրէն տարածուած է հայկական ինքնագիտակցութեան հիմք հանդիսացող հայ եկեղեցւոյ սպասաւորներու հանդերձանքին մէջ՝ ապագայ:

Դեղին գոյնը պատկերուած է ապրելու եւ յոյս պարգեւող արեւի լոյսը՝ Ծիծեռնակաբերդի յուշահամալիրը խորհրդանշող, շրջանածէ դասաւորուած 12 մոյթերու տեսքով՝ յաւերժութիւն:

Ծաղիկի հինգ թերթիկները կը ներկայացնեն հինգ ցամաքամասերը, ուր հայ գաղթականներ յայտնուեցան՝ ստեղծելով հայկական համայնքներ եւ ձեւաւորելով հայկական սփիւռքը:



ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Չինաստան աշխարհի ամենէն շատ բնակչութիւնը ունեցող երկիրն է, ինչպէս նաեւ տնտեսական մարզի մէջ աշխարհի երկրորդ պետութիւնը:

ԳԻՏԵԻՐ, ԹԵ...

•Ամէն տարի Չինաստանի մէջ կը կտրուի 20 միլիոն ծառ 80 միլիառ ատամնակրկիտ պատրաստելու համար:



•Չինաստանի երկաթուղագիծերը կրնան 2 անգամ շրջան ընել մեր Երկիր մոլորակին շուրջ: Երկաթուղագիծերուն ընդհանուր երկարութիւնը 93.000 ըլմ է, մինչդեռ Երկրինը՝ 40.075 ըլմ:


•Չինաստանի մէջ ամէն տարի ծխախոտին պատճառով կը մահանայ մէկ միլիոն մարդ:



•Չինաստանի բնական կազի պաշարները հաւասար են մօտաւորապէս 1.24 միլիառ ողիմպիական չափերու լողաւազաններուն:



•Չինաստանի մէջ 30 միլիոն մարդ կ'ապրի քարայրներու մէջ, ինչ որ աւելի լաւ երեւոյթ կը պարզէ բաղդատած Սեւտական Արաբիոյ բնակչութեան հետ:



•Տարեկան մօտաւորապէս 8 միլիառ զոյգ գուլպայ կ'արտադրուի Չինաստանի Դաթանգ շրջանին մէջ, որ կը ճանչցուի նաեւ իբրեւ զոյգ գուլպաներու քաղաք:




•Աշխարհի վրայ գոյութիւն ունեցող խոզերուն կեսը կը գտնուի Չինաստանի մէջ, ուր կարելի է գտնել 475 միլիոն խոզ:





ԺԱՄԱՆՑ

ԺԱՄԱՆՑ



Լաւ դիտէ՛ պատկերները ու նշէ՛ այն մէկը, որ տարբեր է միւսներէն:

M	Y	P	P	I	A	N	S
A	P	Y	R	U	S	O	P
N	U	R	R	P	R	I	H
U	P	A	M	A	Y	C	I
B	Y	M	M	U	M	P	N
I	B	I	T	P	I	A	X
S	D	D	B	T	O	M	B

ANOBIS
CANOPIC
ISIS
MUMMY

PYTHON
PYRAMID
SPHINX
TOMB

Pyramid Maths

Add the numbers to complete the pyramid

Օգնէ՛ մոմիային՝ գումարելու թիւերը, որպէսզի ան հասնի բուրգի գագաթին:


7	4	5	7
-1	6	4	5
7	7	8	5

6	6	9	8
8	8	9	11
12	9	8	8

9	9	11	12
11	8	8	4
4	12	8	10

8	10	7	5
7	5	7	1
11	5	2	2

Սկսելով սլաքէն՝ հասի՛ր վերջ գրուած տուփիկին, ուր թիւերուն գումարը պէտք է ըլլայ 50: Ուշադիր. օգտագործէ՛ հորիզոնական եւ ուղղահայեաց գիծերը, ինչպէս նաեւ իւրաքանչիւր տուփիկ կրնաս գործածել մէկ անգամ:



Օգնէ՛ զբօսաշրջիկին՝ հասնելու եգիպտական բուրգերուն:

	8		7	1	2	5		
			3	9			7	
		3	4		5		8	
	2	8			9	3	6	1
4		1		2	3	7	9	8
	9	6			1	2	4	5
		4	9		6		5	
			1	5			2	
	6		2	8	7	4		



Ունիս եգիպտական սուտոգու մը. ամբողջացուր քառակուսիները 1-9 թիւերով, պայմանաւ որ նոյն թիւը չկրկնուի ոչ մէկ սիւնակի, շարքի կամ տուփիկի մէջ:

ԻՄ ՀԱՃԵԼԻ ԱՐՁԱԿՈՒՐՆՈՒ

Ամրան արձակուրդին ծնողքիս հետ Հայաստան ճամբորդեցի:

Գացինք Ծիծեռնակաբերդ, այցելեցինք Խոր վիրապ եւ իջանք այդ նեղ մուօ ու խորունկ փոսին մէջ: Այցելեցինք նաեւ Սարգարապատ, Էջմիածին եւ հեռուն հիտեցինք Արարատ լեռը: Մեսրոպ Մաշտոցի արձանին քով նկարուեցայ:

Ես շատ սիրեցի իմ հայրենիքս:

ԿԱԼԻՆԱ ՍԱՆՈՐԵԱՆ

Այս ամառ՝ արձակուրդին, ծնողքիս հետ այցելեցի Արաբական ծոցի երկիրներէն երկուքին: Հոն օդը շատ տաք էր: Տեսայ բարձր բարձր շէնքեր: Մեծ ջրաշխարհ մը գացի: Տեսայ աշխարհի ամենէն բարձր շէնքը: Հոն դիւիսներու ցուցադրութեան գացի եւ նոր ընկերներ ունեցայ:

Հասաւ տուն վերադառնալու օրը: Շատ տխուր էի, որովհետեւ կ'ուզէի հոն մնալ:

ՆԱՆՈՐ ԱՃՏԵԱՆ

Ամրան արձակուրդին՝ օր մը, մօրաքրոջս նաւով պտըտեցանք: Ծովը ալեկոծ էր: Ալիքները կարծես ամպերուն կը միանային: Մեր ընտանիքի անդամները լողացին: Նաւահանգիստ հասանք: Բոլորս ուրախ էինք: Կը սիրեմ ծովը եւ շատ կը փափաքեմ հոն ժամանակ անցընել:

ՆԱՐԵԿ ԸՆՆԱՔԵԱՆ**ԻՄ ԳԵՂԵՑԻԿ ՀԱՅՐԵՆԻՔՍ**

Այս ամառ ես Հայաստան գացի: Բնութիւնը շատ գեղեցիկ էր: Տեսայ Ծիծեռնակաբերդը:

Դաշտերը դալար էին, գունաւոր ծաղիկները կը ծաղկէին ամեն կողմ: Օդը պայծառ էր ու երկինքը կապոյտ:

Ես իմ տունէս ամեն առտու կը դիտէի Արարատը՝ իր ձիւնով ծածկուած գագաթով:

Շատ ուրախ օրեր անցուցի հայրենիքիս մէջ:

ԱՆՔԵՍԱՆ ԱԶԱՐԵԱՆ**ՀԱՅԱՍՏԱՆ**

Այս ամառ՝ արձակուրդիս, ծնողքիս հետ Հայաստան ճամբորդեցի: Հայաստանի բնութիւնը հրաշալի է: Ամեն տեսակ թռչունի հանդիպեցանք: Ամեն իրիկուն անպայման հրապարակ կ'երթայի՝ դիտելու գունաւոր ջուրերու պարը:

Շատ ուրախ էի հայրենիքիս մէջ:

ՆԱՐԵԿ ԱՏՈՒՐԵԱՆ

Ես այս ամառ՝ արձակուրդին, ընտանիքիս հետ Ամերիկայի Միացեալ Նահանգներ ճամբորդեցի: Հոն օդը շատ մաքուր է, տուները շատ մեծ են: Պտըտեցանք գեղեցիկ քաղաքներ: Այցելեցինք Տիպիկի Աշխարհը: Հօրս եւ մօրս զարմիկներուն ծանօթացանք եւ անոնց հետ լաւ ժամանակ անցուցինք:

Վերադարձանք տուն: Ուրախ էի, որովհետեւ արդէն դպրոցս կարօտցած էի:

ԿԱԼԻ ԶԵՍՄԵԱՆ

Ընդհանրապէս ամեն ամառ ես եւ ընտանիքս գիւղ կը բարձրանանք՝ վայելելու մաքուր օդը: Օր մը ես եւ ընկերս տեսանք տխուր մանչուկ մը, որ նստած էր ծառի մը տակ: Անոր ըսինք. «Եկո՛ւր, մեզի հետ խաղա՛»: Անոր անունը Սահակ էր: Ան միացաւ մեզի ու միասին խաղացինք:

Տուն վերադարձայ ուրախ սրտով, որովհետեւ այս օրը մանչուկ մը ուրախացուցի եւ նոր ընկեր մը ունեցայ:

ՍԵՐԺ ԺՏՐԵԱՆ**ՈՒՐԱՆ ԱՍԱՌԸ**

Այս ամառ՝ արձակուրդին, ծնողքիս հետ ճամբորդեցինք Հայաստան: Հայաստան շատ մեծ եւ գեղեցիկ երկիր մըն է:

Ան ունի շատ մեծ տարածութեամբ դաշտեր, ինչպէս նաեւ գեղեցիկ բնութիւն եւ մաքուր օդ: Այցելեցինք շատ հին եկեղեցիներ, ինչպէս՝ Էջմիածին, Խոր Վիրապ եւ Աստուածածին: Շատ ուրախ օր մը անցուցինք, երբ այցելեցինք Արարատեան դաշտ եւ բարեկամներով դաշտագնացութիւն մը ըրինք հոն:

Շատ ուրախ վերադարձայ մեր մայր Հայաստանէն, որովհետեւ կրցայ այցելել բոլոր այն շրջանները, որոնց մասին հայոց պատմութեան դասի ընթացքին սորված էինք:

ԼԻՄԱ ՈՒՆՏԵԱՆ

Ամրան արձակուրդին ես եւ ընտանիքս հանրային պարտէզ մը գացինք: Ես եւ եղբայրս ոտնագնդակ խաղացինք, յետոյ ընտանեօք ճաշարան մը գացինք, ուր հանդիպեցայ ընկերներուս, որոնք անակնկալօրէն տարեդարձ տօնեցին եւ զիս ուրախացուցին:

ՏԱՅԵՒ ԱՐԱՊՕՂԵԱՆ**ԵՍ ԵՒ ԸՆՏԱՆԻՔՍ**

Օր մը ընտանիքիս հետ դաշտագնացութեան գացի: Հոն շատ թռչուններ կային: Բնութիւնը շատ գեղեցիկ էր, իսկ օդը՝ պայծառ: Գետինը կարմիր ծաղիկներ փռուած էին գորգի պէս: Մաքուր լիճ մը կար, մէջը՝ բաղիկներ ու գորտեր:

Շատ ուրախ օր մը անցուցի:

ՅԱԿՈԲ ԳԱՐԱՆԱՆԵԱՆ**ԳԻՒԴԻ ԲՆՈՒԹԻՒՆԸ**

Ամեն տարի ամրան արձակուրդը գիւղ կ'անցընենք: Հօրս հետ հեծելանիւ կը քշեմ գեղեցիկ բնութեան մէջ: Գիւղի օդը շատ մաքուր է:

Օր մը որսի գացի հօրս հետ: Հոն թռչուններ որսացինք եւ արծիւի մը հանդիպեցանք, որուն գեղեցիկ տեսքը բնաւ չեմ մոռնար, մանաւանդ երբ ինկաւ եղբօրս ոտքերուն առջեւ: Զուգեցի տուն վերադառնալ, որովհետեւ շատ ուրախ եւ հաճելի ժամանակ անցուցի այդ օրը:

ՓԱԹԷԼ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ**ԱՄՐԱՆ ԱՐՁԱԿՈՒՐՆՈՒ**

Ամրան արձակուրդի գեղեցիկ օրերէն մէկը ես եւ մայրս Յունաստան ճամբորդեցինք: Հոն մօրեղբօրս տունը մնացինք: Յունաստանի օդը շատ մաքուր է: Գիւղ գացինք, պտըտեցանք եւ շատ գեղեցիկ վայրեր այցելեցինք: Ծովուն ջուրը շատ մաքուր էր: Ծառերով լեցուն կղզի մը գացինք: Ծովուն մէջ մարդ մը նետուեցաւ, որ լաւ լողալ չէր գիտեր: Մարդիկ պարաններով կրցան ազատել զայն:

Վերադարձին, երբ օդանաւէն վար կը դիտէի, չէի ուզեր տուն վերադառնալ:

ՆԱՐԵԿ ՆԱՔԱՇԱՇԵԱՆ

Ամրան արձակուրդի օրերէն մէկը ընտանիքս որոշեց ծով երթալ: Ծովուն գոյնը շատ գեղեցիկ էր: Արմաւի ծառերը կը պատէին չորս կողմս: Երբ կը լողայի, հեռուն տարեդարձի առարկաներ տեսայ: Աւելի մօտեցայ, հետաքրքրութիւնս աւելի շատացաւ, ջուրէն դուրս ելայ: Անոնք անակնկալի բերին զիս. տարեդարձս կը տօնէին:

Ես այդ գեղեցիկ օրը բնաւ պիտի չմոռնամ:

ԴՐՕ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ամրան արձակուրդի գեղեցիկ օրերէն մէկը Հայաստան ճամբորդեցի ծնողքիս հետ: Մեր հայրենիքի թռչուններուն ճշուողիւնը շատ գեղեցիկ է: Զրաշխարհը, ջուրերու պարը, ծառե-

րը, օդը, յուշարձանները չեմ կրնար մոռնալ: Զիւնածածկ Մասիսի գագաթին արեւուն ճառագայթները ոսկիի կը նմանէին:

Հասաւ տուն վերադառնալու օրը: Օդանաւին մէջ շատ տխուր էի, որովհետեւ կը հեռանայի սիրելի հայրենիքս:

ԶԵԱՐ ԳԱՐԱԿԱՌՈՒՐԵԱՆ**ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ**

Ամրան արձակուրդին, ես եւ հայրս միշտ գիւղը կը մնանք: Այս ամառ՝ գրեթէ ամեն օր, որսի գացինք: Տարեդարձս մօտ էր: Մտածեցինք թռչուն խորովել: Այդ օրը տասներկու թռչուն որսացինք: Գոհ չէի: Վերադարձի ճամբուն պարտէզ մը տեսանք: Բաւական ճոխ սեղան մը պատրաստեցինք եւ շատ հաճելի տարեդարձ մը տօնեցինք:

ՀՐԱԿ ԶԻՄՊԵՐԵԱՆ**ԱՄՐԱՆ ԱՐՁԱԿՈՒՐՆՈՒ**

Ամրան արձակուրդի գեղեցիկ օրերէն մէկը, մայրս ուրախ լուր մը փոխանցեց... Հայաստան պիտի ճամբորդէինք մեր հայրենիքին ծանօթանալու համար: Ուրախութիւնս չափ ու սահման չունէր:

Հասանք Հայաստան, հոն ծանօթացանք հօրս քեռիին, որուն շնիկները ամենէն շատ սիրեցի:

Պտըտեցանք մեր հայրենիքին տեսարժան վայրերը: Այցելեցինք Երեւանի հրապարակ, Մայր Հայաստան, Ծիծեռնակաբերդ եւ Խոր Վիրապ: Չիս հետաքրքրեց հրապարակի ջուրերու պարը իր գեղեցիկ գոյներով: Շատ ուրախ եւ անմոռանալի օրեր անցուցինք հայրենիքին մէջ: Բայց դժբախտաբար հասաւ տուն վերադառնալու օրը: Մեզի հետ բերինք քաղցր յիշատակներ եւ գեղեցիկ նկարներ:

ԼԻԱԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ**ԻՄ ԱՍԱՌԱՅԻՆ ԱՐՁԱԿՈՒՐՆՈՒ**

Այս ամառ՝ արձակուրդին, ծնողքիս հետ Յորդանան ճամբորդեցի: Գացինք Մեռեալ ծով: Բնութիւնը շատ գեղեցիկ էր, կային ծառեր, անասուններ եւ գոյնզգոյն ծաղիկներ: Մենք տեսանք գեղեցիկ տուններ եւ բանակավայրեր: Հոն չորս օր մնացինք եւ հաճելի ժամանակ անցուցինք: Շատ ուրախ էի:

ԱՌԼԻ ՍԵՖԵՐԵԱՆ**ԳԵՂԵՑԻԿ ԹՈՉՈՒՆԸ**

Ամրան վերջին օրերը միշտ գիւղ կ'ելլենք ընտանիքիս հետ: Կը սիրեմ գիւղի ծառերն ու ծաղիկները:

Օր մը թռչուն մը տեսայ, բռնեցի զայն, շօշափեցի եւ տեսայ, որ վիրաւոր է: Մայրս թաշկինակ մը տուաւ, որպէսզի փաթեմ անոր թելը: Ան կամաց-կամաց փորձեց թռչիլ: Ես շատ ուրախացայ:

ՈՒԹԱ ՏԵԿԻՐՄԵՆՏԵԱՆ**ԳԻՒԸ**

Ամեն ամառ ես եւ ընտանիքս գիւղ կը բարձրանանք, որպէսզի հանգչինք գործէն ու դասերէն: Գիւղի պարտէզները ծառերով եւ ծաղիկներով լեցուած են: Մեր պարտէզին ծայրը կայ կատու մը, որ ամեն օր հանգիստ կ'ընէ ու արեւի լոգանք կ'առնէ: Մեր աւագանը շատ աղտոտ էր: Ես եւ մայրս մաքրեցինք, որպէսզի եղբօրս հետ լողանք եւ ուրախանանք:

Արձակուրդի աւարտին ուրախ սրտով վերադարձանք գիւղէն եւ պատրաստուեցանք դպրոց երթալու:

ԱՐՄԵՆ ԹԱԹԵԱՆ

Ե. դասարանի աշակերտներ




ՄԻՋ-


ԴՊՐՈՑԱԿԱՆ




Սարին Քեշիշեան -
Գ. դասարան



Սալբի Սալորեան -
7 տարեկան



Արեգ Գազանճեան -
Բ. դասարան



Սարին Հալլաճեան - Ե. դասարան



Կալիա Հ. - 8 տարեկան



Ալին Այանեան - Գ. դասարան



Միա Մելքոնեան - 8 տարեկան



Արման Տադտեվիրեան



Կարեն-Արեն Հանեշեան - Ա. դասարան